



Մխիթար Գոշ

Արջը և Մրջյունը

Արջը փորում էր մրջյունի բույնը և լեզվով հավաքում նրանց ու ուտում: Մրջյունը նրան սպանելու հնարը գտավ: Գնալով պիծակի, իշամեղվի, մժեղի, շնաճանձի, կրետի և սրանց նմանների մոտ, խնդրում է, որ իբրև ազգականներ, օգնեն իրեն: Սրանք կարեկցելով՝ հարվածում են արջի աչքերին ու ականջներին: Արջը քարին է խփում գլուխը, որը նեխվում է, և որդեր են ծնվում մեջը: Ցավի սաստկությունից արջը, բերանը բանալով՝ գոռում է: Իսկ միջատները, մտնելով փորը, ծակծկում են նրա աղիքները: Արջը նեղվելով, դիմում է հոսող ջրին և, չափից ավելի սուզվելով մեջը, խեղդվում:

Առակիս իմաստն այն է, որ հզորները տկարներին արհամարհում են և չեն վախենում նրանցից, բայց փոքրերը ուժեղանում են իմաստությամբ և հաղթում հզորներին: